

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐՔԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2013
ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՆՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՄԻՆ

Հարգելի Գ.Հովհաննիսյան, համագյուղացիներ և հյուրեր, թույլ տվե՞ք ձեր ուշադրությանը ներկայացնել 2013 թվականի գյուղապետարանի աշխատակազմի, իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները ըստ բնագավառների:

2013 թվականի 2-րդ կիսամյակում Ջրարքի գյուղական համայնքի գյուղապետարանը կատարել է աշխատանքներ, որոնք նպաստել են համայնքի բնակչության բարեկեցության ապահովմանը և համայնքի ներդաշնակ զարգացմանը:

Ջրարքի գյուղական համայնքում 2005 թվականից գործում է մանկապարտեզ, որն ամբողջությամբ ֆինանսավորվում է գյուղապետարանի միջոցներով: Մանկապարտեզ են հաճախում 45 երեխա: Երեխաների սննդի և տնտեսական ապրանքների ձեռքբերման համար 2013 թվականի 2-րդ կիսամյակում ծախսվել է 3755000 / երեք միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար / դրամ գումար:

Համայնքի ավագանու որոշմամբ ամսական 81800 /ութսունմեկ հազար ութ հարյուր/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրարքի համայնքի բնակիչ Ա.Բաղդասարյանի հետ, համայնքում յուրաքանչյուր շաբաթ` շաբաթական երկու անգամ կատարվում է աղբահանման աշխատանքներ: Աղբահանման դիմաց վարձատրությունը կատարվում է համայնքի բյուջեի միջոցներով, 2-րդ եռամսյակում աղբահանման համար ծախսվել է 572600 / հինգ հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր/ դրամ գումար:

2-րդ կիսամյակում ավագանու որոշմամբ 239400 (երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր) դրամը հատկացվեց` սեպտեմբերի 1-ի կապակցությամբ Ջրարքի համայնքի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանի աշակերտների նվերների ձեռք բերման համար: Միջոցառման ժամանակ թվով 42 1-ին դասարանի աշակերտներից յուրաքանչյուրին նվիրվեց 5700 / հինգ հազար յոթ հարյուր / դրամ արժողությամբ նվերներ` աշակերտական պայուսակ` գրեմական պիտույքներով լի:

Գյուղապետարանը գնահատում է համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցիչների աշխատանքը` երեխաների դաստիարակության գործում, և կարևորում է ուսուցչի դերն ու նշանակությունը հասարակության կյանքում: Ուսուցչի օրվա կապակցությամբ, համայնքի միջնակարգ

դպրոցի թվով 25 ուսուցիչների նվիրվեց 4000 / չորս հազար/ դրամ արժողությամբ նվերներ:

Գյուղապետարանը հնարավորինս փորձում է օգնել դպրոցին և ծնողներին, Ջրարբի գյուղական համայնքի միջնակարգ դպրոցին ֆինանսական օգնություն ցույց տալու նպատակով, համայնքի բյուջեից դպրոցի դասագրքերի վճարների համար հատկացվեց 429276 (չորս հարյուր քսանինը հազար երկու հարյուր յոթանասունվեց) դրամ գումար, և համայնքում ոչ մի աշակերտից դասագրքերի վարձավճարի գումար չի պահանջվել:

Ամանորի կապակցությամբ միջոցառում կազմակերպվեց դպրոցում և մանկապարտեզում: Ավագանու որոշմամբ 405850 /չորս հարյուր հինգ հազար ութ հարյուր հիսուն/ դրամը հատկացնել Ջրարբի համայնքի միջնակարգ դպրոցի I-IV դասարանի թվով 126 աշակերտներին, Ջրարբի համայնքի մանկապարտեզի թվով 35 երեխաներին, համայնքի թվով 6 հաշմանդամ երեխաներին, Ջրարբի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների և «Ջրարբի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվով 10 երեխաներին Ամանորի առթիվ նվերներ ձեռք բերելու համար: Յուրաքանչյուր երեխայի նվիրվեց 2293 /երկու հազար երկու հարյուր իննսուներեք/ դրամ արժողությամբ նվերներ: Գյուղապետարանի միջոցներով մանկապարտեզ էին հրավիրվել երեխաների կողմից շատ սիրված հեքիաթի հերոսները, Ձմեռ պապն ու Չյունանուշը: Համայնքի բյուջեից 119000 /մեկ հարյուր տասնինը հազար/ դրամ հատկացվեց դպրոցի I-IV դասարանների աշակերտների՝ Երևանում կայանելիք Ամանորի հանդեսին մասնակցելու ճանապարհածախսի համար:

2013 թվականի 2-րդ կիսամյակում համայնքի բյուջեով նախատեսված 4269 «Փողոցների լուսավորում» հոդվածից 103500 (մեկ հարյուր երեք հազար հինգ հարյուր) դրամը հատկացվեց փողոցային լուսերի վերանորոգման աշխատանքների և սարքավորումների համար: Ամբողջ տարվա համար օրական 4- 5 ժամ լուսավորություն է ապահովվում համայնքում:

2-րդ կիսամյակում համայնքի անապահով 19 ընտանիքների տրամադրվել է 822000 /ութ հարյուր քսաներկու հազար/ դրամ սոցիալական օգնություն, իսկ հարազատին կորցրած 4 ընտանիքներից յուրաքանչյուրին տրամադրվել է 50000 /հիսուն հազար/ դրամ գումար՝ ընդամենը 200000 (երկու հարյուր հազար) դրամ:

2-րդ կիսամյակում 3014100 /երեք միլիոն տասնչորս հազար հարյուր / դրամ հատկացվեց գյուղապետարանի շենքի հիմնովին վերանորոգման աշխատանքների ինչպես նաև ջեռուցման նոր համակարգի անցկացման համար:

2-րդ կիսամյակում բնակիչների պահանջով գրվել է 307 տեղեկանք:

2013 թվականի 2-րդ կիսամյակում տեղի է ունեցել 9 ավագանու նիստ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերող տարաբնույթ հարցեր, ինչպես նաև սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների գյուղապետարան ներկայացրած դիմումները:

Ջրարբի համայնքում 2013 թվականի 2-րդ կիսամյակում օրենքով սահմանված կարգով կատարվել է սեփական եկամուտների հավաքագրում:

2013 թվականի Ջրարբի համայնքի բյուջեով հաստատվել է 27638300 / քսանյոթ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր/ դրամի եկամուտ, 2-րդ կիսամյակում մուտքագրվել է 14180200 /տասնչորս միլիոն հարյուրութսուն հրազար երկու հարյուր/ դրամը, որը կազմում է ընդհանուր բյուջեի 51.3%-ը:

Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային եկամուտների, վարձակալական հողի հարկի և տեղական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝

| | |
|--|--------------------------|
| Գույքահարկ շենքերի շինությունների փոխադրամիջոցների | 3036.5 - 2081.1 - 68.53% |
| Գյուղ. նշ. հողերից հողի հարկ | 2325,0 -1120.5 -48.19 % |
| վարձակալակնա հողի հարկ | 210.0 – 82.7- 78.76% |
| տեղական տուրք | 250.0 - 37.5 -15% |
| տեղական վճար | 210.0 - 0 |
| Դոտացիա | 21716.8 - 10858.4 - 50% |

2-րդ կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝

Գյուղապետարան

| | |
|---------------------------|--------------------|
| Աշխատավարձ | - 5057.7 հազ. դրամ |
| Պարգևատրում | -729.0 հազ.դրամ |
| Էներգետիկ ծառայություններ | - 466.7 հազ. դրամ |
| Կապի ծառայություններ | - 50.0 հազ. դրամ |

| | |
|-------------------------------------|--------------------|
| Ներքին գործուղում | - 44.0 հազ. դրամ |
| Ներկայացուցչական ծախսեր | - 745.0 հազ. դրամ |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայութ. | - 200.2 հազ. դրամ |
| Մասնագիտական ծառայութ. | - 7.7 հազ. դրամ |
| Գրասենյակային նյութեր` | - 44.0 հազ. դրամ |
| Տրանսպորտային նյութեր | - 513.3 հազ. դրամ |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | -463.3 հազ. դրամ |
| Շենքերի և կառույցների նորոգում | - 68.4 հազ. դրամ |
| Շենքերի և կառույցների կառուցում | - 944.9 հազ. դրամ |
| Վարչական սարքավորումներ | - 1315.2 հազ. դրամ |
| Կոմունալ ծառայություններ | - 572.6 հազ. դրամ |
| Այլ մշակութային կազմակերպություն | - 260.0 հազ. դրամ |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | - 103.5 հազ. դրամ |
| Հրատարակչություններ | -24.0 հազ. դրամ |
| Այլ նպաստներ բյուջեից | -1501.3 հազ.դրամ |

«Հայ. Էլ. Ցանց»-ին գյուղապետարանը փոխանցել է`

Գյուղապետարանի համար 366.7 հազ. դրամ ,

Ընդամենը փոխանցվել է 366.7 հազ. դրամ:

«ՀայՈՒՍԳԱԳԱՐՈՒԿ»` գյուղապետարանը փոխանցել է`

Գյուղապետարանի համար -100.0 հազ. դրամ

Ընդամենը փոխանցվել է

-100.0 հազ. դրամ

2013 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ Ջրաբքի համայնքի վարչական բյուջեի մնացորդը կազմում է 2375976 / երկու միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր յոթանասունվեց / դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մնացորդը կազմում է 5068365 / հինգ միլիոն վաթսունութ հազար երեք հարյուր վաթսունհինգ / դրամ:

Ջրաբքի համայնքի տնօրեն



[Handwritten signature]

Ղ.Ղազարյան